

ՀԾ-Բանկ 4.0

համակարգի նկարագրությունը

հայկական ծրագրեր

Միասնական տվյալների պահոց

Միասնական տվյալների աղբյուր

հաշվետվությունների և

վերլուծությունների համար

ՀԾ-Բանկ համակարգը ենթադրում է միասնական տվյալների պահոց բոլոր մասնաճյուղերի և ենթահամակարգերի տվյալների համար: Այն հանդիսանում է լիարժեք աղբյուր բանկի գործունեության տարբեր ոլորտներին վերաբերվող միասնական հաշվետվությունների ստացման համար:

Բանկի մասնաճյուղերի և

ստորաբաժանումների գործունեության

վերահսկողություն իրական ժամանակում

Միասնական տվյալների պահոցն առավել արդյունավետ է դարձնում նաև բանկի մասնաճյուղերի և տարբեր ստորաբաժանումների գործունեության ամենօրյա վերահսկողությունը: Նշված աշխատանքներին նպաստում են նաև բանկի աշխատակիցների կողմից համակարգում կատարված գործողությունների, ինչպես նաև նրանց կողմից մուտքագրված փաստաթղթերի մշակման վերաբերյալ, համակարգում ավտոմատ վարվող պատմությունը:

Համակարգի շահագործման ծախսերի կրճատում

Տվյալների կենտրոնացված լինելը ազատում է բանկին մի շարք լրացուցիչ ծախսերից որոնք են՝

1. մասնաճյուղերի համար սերվերների ձեռքբերում
2. մասնաճյուղերում համակարգերի ընթացիկ սպասարկման համար մասնագետների առկայության կամ նրանց հաճախակի գործուղման ծախսեր:

Իրավասությունների բաշխման ճկուն մեխանիզմ

Իրավասությունների բաշխումը իրականացվում է դերերի միջոցով: Դերի միջոցով հնարավոր է նկարագրել իրավասությունների որոշակի փաթեթ, նմանատիպ իրավասությունների պահանջներ ունեցող օգտագործողներին տրամադրելու համար: Մեկ օգտագործողին հնարավոր է կցել մի քանի դեր: Օգտագործողի իրավասությունները որոշվում են իրեն կցված դերերով: Ճկուն մեխանիզմի շնորհիվ հնարավոր է միևնույն դերի տրամադրումը տարբեր մասնաճյուղերի աշխատակիցներին, միաժամանակ ապահովելով նրանց հասանելիությունը միայն իրենց մասնաճյուղին կամ բաժնին վերաբերվող տվյալներին:

Աշխատանք իրական ժամանակում

Էլեկտրոնային

փաստաթղթաշրջանառություն

Համակարգում վարվում են իրական թղթային փաստաթղթերի էլեկտրոնային օրինակները՝ վճարային փաստաթղթեր, պայմանագրեր, կարգադրություններ և այլն: Էլեկտրոնային փաստաթղթերի մշակումը շատ նման է նրան, թե ինչպես կմշակվեին նրանք թղթային տարբերակով ստեղծված լինելու դեպքում: Փաստաթղթերը ստեղծվում են, անցնում որոշակի հաստատման փուլեր, առաջացնում հաշվապահական ձևակերպումներ: Որոշ փաստաթղթեր իրենց հերթին մշակման ընթացքում կարող են գոյացնել այլ փաստաթղթեր օրինակ՝ վարկի կանխիկով մարման դեպքում, վարկային պայմանագրից ծնված պարտքերի մարման կարգադրությունից մշակման ընթացքում ստեղծվում է կանխիկ մուտք տիպի փաստաթուղթ:

Փաստաթղթաշրջանառության

կարգավորում ըստ բանկի

առանձնահատկությունների

Փաստաթղթաշրջանառությունը կարգավորվում է ըստ առանձին փաստաթղթերի տեսակների: Նույն տեսակի փաստաթղթերի անցման ճանապարհը կարող է տարբեր լինել

կախված նրանց գումարից, արժույթից, բանկի մասնաճյուղից, հաճախորդի առանձնահատկություններից, գործարքը մուտքագրած աշխատակցից, և այլ պայմաններից: Համակարգում առկա կարգավորման հնարավորությունները թույլ են տալիս լիարժեք համապատասխանեցնել փաստաթղթաշրջանառությունը բանկի պահանջներին:

Կատարված գործարքների անմիջապես արտացոլում համակարգում

ՀԾ-Բանկ համակարգի օգտագործումը նախատեսում է գործարքների վերաբերյալ փաստաթղթերի մուտքագրումը համակարգ զուգահեռ նրանց կատարմանը: Նշվածը ոչ միայն նպաստում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությանը այլ նաև լայն հնարավորություն է ստեղծում տարբեր առցանց լուծումների օգտագործման համար (հաճախորդ-բանկ, ինտերնետ-բանկ և այլն), էականորեն կրճատում է թղթային փաստաթղթերի պատրաստման ժամանակը, ինչպես նաև թույլ է տալիս խուսափել սխալներից:

Հաճախորդների հաշվարկադրամարկղային սպասարկում

Սպասարկում ցանկացած

մասնաճյուղում

Միասնական տվյալների պահոցի շնորհիվ ՀԾ-Բանկ 4.0 համակարգը օգտագործող բանկի հաճախորդը հնարավորություն ունի սպասարկվել բանկի ցանկացած մասնաճյուղում:

Վճարահաշվարկային

ծառայությունների բազմազանություն

Ստանդարտ վճարահաշվարկային ծառայություններից բացի համակարգը թույլ է տալիս իրականացնել կոմունալ, կապի և այլ տարատեսակ վճարումներ: Հնարավոր է նաև տարբեր օպերատորների կողմից տրամադրվող պարտքերի վերաբերյալ տվյալների ներմուծումը, իսկ որոշ օպերատորների հետ վճարումների վերաբերյալ տեղեկատվության հաղորդումը իրականացվում է առցանց՝ ապահովելով վճարման ակնթարթային կատարումը:

Արդյունավետության բարձրացում

ՀԾ-Բանկ համակարգը թույլ է տալիս բարձրացնել հաճախորդների սպասարկման որակը և արագությունը՝ ապահովելով աշխատանքների բաշխումը սպասարկման բաժնի աշխատակիցների միջև: Իսկ վճարային փաստաթղթերի վերստուգման և հաստատման փուլերի կարգավորումը թույլ է տալիս էականորեն կրճատել սխալների քանակը:

Սև ցուցակ

Գործարքների մշակման ընթացքում ավտոմատ ստուգվում են դրանք իրականացնող անձանց տվյալները ՓԼԱՖ –ի հետ կապված, ինչպես նաև ԴԱՀԿ –ի կողմից արգելանքներ, բռնագանձումներ տարածած անձանց ցուցակների հետ: Բացի այդ, բանկը հնարավորություն ունի ինքնուրույն սահմանել այն անձանց լրացուցիչ ցուցակները, որոնց հետ գործարքները արգելված են կամ կատարվում են որոշակի սահմանափակումներով:

Փոխանցումներ

Համակցում BankMail և SWIFT

համակարգերի հետ

Լիարժեք համակցումը Բանկմեյլ և SWIFT համակարգերի հետ թույլ է տալիս ապահովել հաղորդագրությունների փոխանցումը բանկի ծրագրային և վճարային համակարգերի միջև:

Աշխատանք առանց հաշվի բացման

փոխանցումների համակարգերի հետ

Բանկային փոխանցումների համակարգերից բացի ՀԾ-Բանկ

համակարգը թույլ է տալիս սպասարկել բազմաթիվ, առանց հաշվի բացման արագ փոխանցումների համակարգեր որոնցից են՝

- Western Union
- MoneyGram
- Contact
- Anelik
- Золотая корона
- Unistream
- Быстрая почта

Ներգրավված և տեղաբաշխված միջոցների հաշվառում

Ներգրավված և տեղաբաշխված միջոցների ենթահամակարգեր

ՀԾ-Բանկ 4.0 համակարգը ունի ներգրավված և տեղաբաշխված միջոցների հաշվառման համար նախատեսված հետևյալ ենթահամակարգերը:

1. Վարկեր(տեղաբաշխված)
2. Օվերդրաֆտ (տեղաբաշխված)
3. Ավանդներ (տեղաբաշխված)
4. Ֆակտորինգ
5. Ֆինանսական լիզինգ
6. Գերաձախս

7. Պետական արժեթղթեր
8. Ոչ պետական արժեթղթեր
9. Ռեպո /Հակադարձ ռեպո
10. Սվոպ
11. Ներգրավված վարկեր
12. Ներգրավված ավանդներ

Վարկերի, ավանդների և այլ ենթահամակարգերի մշակումը իրականացվել է հաշվի առնելով մեր պատվիրատուների կողմից մշակված պրոդուկտները: Ներկայումս համակարգը հնարավոր է կարգավորել ՀՀ-ում կիրառվող վարկային կամ ավանդային

պրոդուկտների տեսակների ճշող
մեծամասնության հաշվառման համար:

Կարգավորման և օգտագործման ընդհանրություններ

Չնայած տարբեր ֆինանսական
գործիքների հաշվառման
առանձնահատկությունների
համակարգում նրանց կարգավորման և
օգտագործման սկզբունքները շատ նման
են: Նշվածը հնարավորություն է
ստեղծում ՀԾ-Բանկ համակարգի
օգտագործողներին հեշտությամբ
յուրացնել տարբեր ֆինանսական
գործիքների հաշվառման համար
նախատեսված ենթահամակարգերը:

Վարկային հայտերի հաշվառում

Ըստ բանկի ցանկության հնարավոր է
նաև իրականացնել վարկային հայտերի
հաշվառումը: Նշվածը թույլ է տալիս
ունենալ ամբողջական պատմություն
վարկի ստացման համար երբևէ դիմած
անձանց, նրանց կողմից ներկայացված
փաստաթղթերի և նրանց վերաբերյալ
կայացրած որոշումների վերաբերյալ:

Պայմանագրերի, կարգադրությունների և այլ փաստաթղթերի ձևավորում

ՀԾ-Բանկ 4.0 համակարգի
պայմաններում յուրաքանչյուր բանկ կամ
վարկային կազմակերպություն

հնարավորություն ունի մշակելու
սեփական պայմանագրերի,
կարգադրությունների և այլ
փաստաթղթերի տպվող ձևերի
ձևանմուշները, որոնք այնուհետև
հնարավոր է ներմուծել համակարգ և
նրանց հիման վրա ավտոմատ ձևավորել
տպվող ձևերը: Տպվող ձևերի ավտոմատ
ստացումը հնարավոր է ինչպես՝ MS
Word, Open Office միջավայրերում,
այնպես էլ PDF ձևաչափով:

Պարտքերի առցանց մարման հնարավորություն

ՀԾ-Բանկ համակարգը օգտագործող
բանկը հնարավորություն ունի իր
հաճախորդներին առաջարկելու վարկերի
մարման տարբեր եղանակներ: Բացի
ՀԾ-ԻնտերնետԲանկ, ՀԾ-ԿլիենտԲանկ
համակարգերից հաճախորդները կարող
են իրենց մարումները իրականացնել
CashIn մեքենաների միջոցով (Թելսել,
Տանդեմ) ինչպես նաև օգտվել idram
համակարգից:

Վարկային ռեզիստր, ԱՔՐԱ

ՀԾ-Բանկ համակարգում ամբողջովին
ավտոմատացված է վարկային ռեզիստր,
և ԱՔՐԱ տրամադրվող
տեղեկատվության ստացումը:
Ավտոմատացված է նաև Վարկային
ռեզիստրից ստացված տեղեկատվության
մշակումը, ՎՌ-ից ստացված
տեղեկատվության հիման վրա
ակտիվների դասակարգումը:

Հաշվետվություններ վերլուծություններ

OLAP

ՀՀ ԿԲ, ինչպես նաև այլ

հաշվետվությունների ստացումը
իրականացվում է՝ ինչպես անալիտիկ,
այնպես էլ OLAP ենթահամակարգում
ձևավորվորված ագրեգատների հիման
վրա: Ագրեգատները իրենցից
ներկայացնում են պարբերաբար
(օրական կամ ժամանակահատվածի
համար) հաշվարկված տվյալների խմբեր
(օրինակ՝ սինթետիկ հաշիվների
մնացորդներ և շրջանառություն,
հաշիվների թղթակցություններ,
պայմանագրեր ըստ ռիսկայնության և
այլն): Բացի ստանդարտ խմբերից OLAP
–ի պահոց կարող են արտահանվել նաև
օգտագործողի կողմից նկարագրվող
խմբերը: OLAP արտահանված տվյալները
հնարավոր է օգտագործել տարբեր
հաշվետվությունների ստացման համար՝
ինչպես ՀԾ-Բանկ համակարգից, այնպես
էլ MS Excel միջավայրում: OLAP-ի պահոց
արտահանված տվյալների
օգտագործումը իրականացվում է
հատուկ ֆունկցիաների միջոցով:

**Օգտագործողի կողմից նկարագրվող
հաշվետվություններ**

Այս միջոցը լայն հնարավորություններ է
ընձեռնում տարատեսակ
հաշվետվությունների ձևավորման
համար: Նշվածը իրականացում է
համակարգում արդեն իսկ առկա
հաշվետվությունների ձևափոխման
միջոցով: Օգտագործողը ընտրելով
գոյություն ունեցող որոշակի
հաշվետվություն հնարավորություն ունի
ավելացնել, կամ հեռացնել դաշտեր,
խմբավորել կամ ֆիլտրել տողերը:
Ավելացված դաշտերի արժեքների
հաշվարկման, ինչպես նաև ֆիլտրման
ժամանակ հնարավոր է կիրառել ինչպես
պարզ բանաձևեր, այնպես էլ VBScript
լեզվով ստեղծված ֆունկցիաներ: Այս
ամենը իրագործելիս օգտագործողին
հասանելի են նաև ՀԾ-Բանկ
համակարգի ներքին ֆունկցիաները,
որոնք թույլ են տալիս բեռնել
փաստաթղթերի, նրանց ռեկվիզիտների
և կատարված գործողությունների հետ
կապված տվյալները: Օգտագործողի
կողմից նկարագրվող
հաշվետվություններում հնարավոր է
օգտագործել նաև OLAP –ի պահոց
արտահանված խմբերի տվյալները:

Համակարգի կառուցվածքը

Հիմնական մասի կառուցվածքը

ՀԾ-Բանկ համակարգն ունի եռամակարդակ կառուցվածք

1. Տվյալների հենքի սերվերներ
2. Կիրառությունների սերվեր (application server)
3. Աշխատանքային կայաններ

Տվյալների սերվերները նախատեսված են OLTP և OLAP տվյալների հենքերը սպասարկելու համար: Առաջինը նախատեսված է անալիտիկ տվյալների պահպանման համար (հաշիվներ, վճարային փաստաթղթեր, պայմանագրեր, գործողություններ...), երկրորդը՝ նրանց հիման վրա ձևավորված ագրեգատների համար: Փոքր կազմակերպություններում հնարավոր է թվարկված երկու տվյալների պահոցների համատեղումը մեկ սերվերի վրա: Կիրառությունների սերվերը հանդիսանում է միջանկյալ օղակ տվյալների հենքերի սերվերի և ՀԾ-Բանկ համակարգի մաս կազմող ծրագրերի միջև (օրինակ՝ ՀԾ-Բանկ, ՀԾ-ԻնտերնետԲանկ) և պարունակում է տարատեսակ ֆունկցիաներ, որոնք կարող են օգտագործվել թվարկված ծրագրերի կողմից:

ՀԾ-Բանկ համակարգի կլիենտական մասը կարող է տեղադրվել՝ ինչպես առանձին աշխատակայանների վրա, այնպես էլ տերմինալ սերվերների վրա: Տերմինալ սերվերների օգտագործումը, հատկապես, շատ հարմար է բանկի մասնաճյուղերի աշխատակիցների մոտքը դեպի ՀԾ-Բանկ համակարգ ապահովելու համար: Այն թույլ է տալիս ապահովել՝ ինչպես համակարգի կենտրոնացված սպասարկումը՝ այնպես էլ խուսափել կապի խափանումների արդյունքում հնարավոր տվյալների կորուստից:

Բիզնես-Գործընթացների ղեկավարման միջուկ

ՀԾ-Բանկ համակարգը կառուցված է բիզնես-գործընթացների ղեկավարման հատուկ տեխնոլոգիական միջուկի հիման վրա, որի անվանումն է՝ AS-4X: Այն իրենից ներկայացնում է ծրագրային պլատֆորմ, որի միջոցով հնարավոր է նախագծել և արդյունավետ իրականացնել կազմակերպության գործընթացները և փաստաթղթաշրջանառությունը: Միջուկը թույլ է տալիս գործող համակարգում նկարագրել նոր գործընթացներ և փոփոխել եղաձևերը: Այդ մոտեցման շնորհիվ կազմակերպությունները կարողանում են արագ արձագանքել

փոփոխվող արտաքին գործոններին և
արդյունավետ հարմարվել նոր
պահանջներին: AS-4X պլատֆորմը թույլ
է տալիս նաև պատվիրատու
կազմակերպություններին ինքնուրույն
կատարել սեփական ծրագրային
մշակումներ, որոնք լիովին
ինտեգրացված կլինեն համակարգի
հետ: Այս հնարավորության շնորհիվ
կազմակերպությունները մեծ
ազատության աստիճան են ստանում
իրենց յուրահատկություններն
ինքնուրույն ավտոմատացնելու և
տարբեր այլ համակարգերի հետ
համակցման աշխատանքներն
արդյունավետ իրականացնելու
գործընթացում: